

**Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի  
գյուղատնտեսության և բնապահպանության վարչության 2013թ. իրականացրած  
աշխատանքների վերաբերյալ**

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության կառուցվածքային ստորաբաժանման համակարգում ընդգրկված երկու բաժինները 2013թ. աշխատանքային ծրագրին համապատասխան վերադաս մարմիններից, ՀՀ Արմավիրի մարզպետից, մարզպետի տեղակալներից և մարզպետարանի աշխատակազմի ղեկավարից ստացած հանձնարարականների, համայնքներից ներկայացված միջնորդագրերի, առաջարկությունների և ազգաբնակչությունից ստացված դիմում-բողոքների հիման վրա մինչև 31.12.2013թ. իրականացրել է հետևյալ աշխատանքները և գործառույթները.

**Գյուղատնտեսության արտադրության բնագավառ**

Մարզի 124211 հա վարչական տարածքում 97066,9հա-ը գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից 43303 հա-ն 2013թ օգտագործվել է գյուղատնտեսական արտադրության մեջ ` 27827հա վարելահողեր, 7136հա-ն խաղողի և 8340 հա-ն պտղատու այգիներ:

Գյուղատնտեսական արտադրության մեջ ընդգրկված հողատարածքները, ըստ առանձին մշակաբույսերի տնօրինվել են հետևյալ կերպ.

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

h/h	Մշակաբույսի անվանումը	Տարածքը /հա/	Միջին բերքը g/հա	Համախառն բերքը /հազար տոննա/	Այդ թվում՝ հավաքված է կրկնակի միջշարային տարածություններից
-----	-----------------------	--------------	------------------	------------------------------	--

1.	Հացահատիկ	5777	36,1	20,85	
2.	Հատիկաընդեղեն	226	45,5	1.028	
3.	Կարտոֆիլ	1216	268	35,15	2,55
4.	Բանջարեղեն	9007	359,1	342,39	18,97
5.	Բոստան	3499	378.7	132,50	
6.	Բազմամյա և միամյա խոտաբույսեր	8327,5	151,83	145,0	18,66
7.	Պտուղ	8340/6560	114,1	74,98	
8.	Խաղող	7136/6126	156,6	95,92	
	Ընդամենը	43303			

2013թ. գյուղատնտեսական տարում 2012թ-ի հետ համեմատությամբ մարզում ավել է օգտագործվել 656,2հա հողատարածություն:

2013թ մարզում հիմնվել է 575,87հա բազմամյա տնկարքներ,որից 334,13հա-ն պտղատու և 241,74հա խաղողի այգիներ:

2013թ գյուղատնտեսական տարին սկսվել էր բարեհաջող և գրեթե բոլոր մշակաբույսերի գծով սպասվում էր բարձր բերք:

Ինչպես հանրապետության այնպես էլ մարզի վարչական տարածքը ապահովագրված չէ բնակլիմայական աղետների վնասներից:

2013թ. ապրիլի 23-ի լույս 24-ի գիշերը տեղի ունեցած ցրտահարության հետևանքով վնասվեցին մարզի 29 համայնքների 1829հեկտար տարածության վրա աճեցված մշակաբույսերը 20-90 տոկոսով:

Մայիսի 12-ին, 17-ին տեղի ունեցած աննախադեպ կարկտահարությունը լուրջ վնաս հասցրեց մարզի գյուղատնտեսությանը:

Մարզային հանձնաժողովը գույքագրել է 50տոկոսից բարձր վնասված 46 համայնքների հողատարածությունները: 46 համայնքներում 12787 հողօգտագործողների կողմից մշակվող 11137 հեկտար հողատարածությունները վնասվել են կարկտահարությունից, որի հասցված վնասը գնահատվում է շուրջ 25,3 մլրդ դրամ:

Կարկտահարության հասցրած վնասները հնարավորինս մեղմելու, հողօգտագործողներին համակողմանի աջակցելու, ինչպես նաև հետագայում աղետների վնասները մեղմելու նպատակով ՀՀ կառավարության և մարզպետի կողմից իրականացվել են մեծ ծավալի աշխատանքներ.

1. Թվով 37 գյուղական համայնքների գյուղացիական տնտեսություններին Հայաստանի Հանրապետության նախագահի կողմից հատկացվել է 100000 /մեկ հարյուր հազար/ լիտր դիզելային վառելիքային:
2. ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը Արմավիրի մարզպետարանին հատկացրել է 87 մլն դրամ արժողությամբ 24028կգ տարբեր մշակաբույսերի սերմացու,

ինչպես նաև 5622 հատ լուլիկի, պղպեղի և սմբուկի սածիլներ, որը անվճար բաշխվել է 48 համայնքների հողօգտագործողներին՝ ըստ ներկայացրած պահանջարկի:

Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնը պատրաստել է խորհրդատվական թերթիկներ և հանրապետության փորձառու գիտնականների մասնակցությամբ իրականացրել անհրաժեշտ խորհրդատվություն:

3. ՀՀ կառավարության 2013թ հունիսի 6-ի 614-Ն որոշման համաձայն կարկտահարությունից առավել տուժած 23 համայնքների թվով 1599 անապահով ընտանիքներին հատկացվել է դրամական օգնություն 50 հազար դրամի չափով, որի ընդհանուր արժեքը կազմել է 79 մլն. 950 հազար դրամ:
4. Կարկտահարությունից տուժած 22 համայնքներում, որտեղ վնասի չափը կազմել է 80-100 տոկոս ՀՀ կառավարությունը ամբողջությամբ փոխհատուցել է հողի հարկի վճարները, իսկ մնացած՝ 24 համայնքներում որտեղ վնասի չափը կազմել է 50-80 տոկոս՝ փոխհատուցումը եղել է 50 տոկոսի չափով: Փոխհատուցվող գումարի ընդհանուր չափը կազմել է 205318500 դրամ:  
Ոռոգման ջրի վարձի փոխհատուցումը ևս իրականացվել է նույն սկզբունքով, որը կազմել է 650120000 դրամ:
5. Հայկական կարմիր խաչի ընկերությունը 15 համայնքներում 4072 ընտանիքի տրամադրել է սննդի և հիգենիկ պարագաների փաթեթներ, որը բավարարելու է տուժած ընտանիքների 2-3 ամսվա սննդի և հիգենիկ պարագաների կարիքները:
6. Հայ առաքելական եկեղեցին 6 համայնքների առավել կարիքավոր ընտանիքներին բարեգործական նպատակներով իրականացրել է այլուրի տրամադրում:
7. Կարկտահարված համայնքների գյուղացիական տնտեսությունների վարկային բեռի թեթևացման նպատակով տուժած հողօգտագործողների արտարժույթով ունեցած վարկերը վերաձևակերպվել են դրամային վարկերի և սուբսիդավորվել են ՀՀ կառավարության կողմից:  
Ինչպես նաև առևտրային բանկերի կողմից անհատական մոտեցմամբ իրականացվել են վարկերի վճարման ժամկետների երկարաձգում 1-3 տարի ժամկետով:
8. Կարկտահարված համայնքների գյուղացիական տնտեսություններին աջակցելու նպատակով ՀՀ ազգային ժողովի պատգամավորների կողմից բացված հիմնադրամում կուտակված դրամական միջոցներից 37 համայնքների թվով 6013 գյուղացիական տնտեսություններին հատկացվել է 40000 դրամ. ընդհանուր արժեքով 240,52 մլն դրամ:
9. Կարկտահարությունից տուժած գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր կամ վարձակալ կամ անհատույց օգտագործող հանդիսացող անձանց զբաղվածության խթանման միջոցով նրանց գյուղացիական տնտեսության վերականգնման ծրագրով խիստ վնասված թվով 22 համայնքների 630 ընտանիքների 1411 մասնակիցներին տրամադրվել է 119,28 մլն դրամ գումար:
10. Կարկտահարված համայնքներից բուհերում ուսանողների թիվը կազմում է 269, որոնք համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանի համապատասխան ուսումնական հաստատություններ են դիմել ուսման վարձերի զեղջման խնդրանքով:  
Արմավիրի մարզպետի մի շարք որոշումներով դրամական օգնություն է տրամադրվել 14 ուսանողների՝ յուրաքանչյուրին 50000 դրամ, ընդհանուր արժեքով 700000 դրամ:
11. ՀՀ Արմավիրի մարզպետի կողմից միջնորդություն է ներկայացվել „Արմենիան Լայթ Հաուս“, բարեգործական ընկերությանը մարզի Ծաղկալանջ, Նոր-Կեսարիա և Ջրաշեն համայնքների սոցիալապես անապահով ընտանիքներին, ինչպես նաև հայրենական պատերազմի թվով 15 վետերաններին սոցիալական օգնություն տրամադրելու նպատակով:
12. Արմավիրի մարզպետի աջակցությամբ կարկտահարությունից խիստ վնասված 24 համայնքների հողօգտագործողներին անվճար հատկացվել է 56,4 կգ „ԷԿՈ ԳԵԼ“, աճի կարգավորիչ, որը օգտագործվել է շուրջ 1000 հեկտար խաղողի այգիների սնուցման,

ինչպես նաև 900կգ բանջար-բոստանային մշակաբույսերի սերմերի մշակման նպատակով:

Միաժամանակ Ալաշկերտ, Արևիկ, Նալբանդյան և Հայկավան համայնքների 25հեկտար խաղողի սեղանի սորտի տարածություններում անվճար իրականացվել է արտարմատային սնուցման և բուժման աշխատանքներ:

13. Հետագայում կարկտահարության դեպքերը նվազեցնելու նպատակով ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ հատկացվել է 350մլն դրամ գումար մարզում ևս 50 հակակարկտային կայաններ կառուցելու համար և 15 համայնքներում գործող` համայնքային սեփականություն հանդիսացող թվով 30 կայանները հաճնվել են ՀՀ ԱԻ նախարարության „ՄԵՎԱՆԾ,, ՊՈԱԿ-ի կառավարմանը, որի վերաբերյալ համայնքների ավագանիները կայացրել են համապատասխան որոշումներ:

Հաշվետու տարում` չնայած աննախադեպ կարկտահարության, ձեռնարկված միջոցառումների շնորհիվ, հացահատիկի, բոստանի, բանջարեղենի և խոտի արտադրության ծավալները գերազանցեցին նախորդ տարվա մակարդակը:

2013թ ընթացքում մարզի գյուղացիական տնտեսություններից մթերող կազմակերպությունների կողմից մթերվել է 7186,6տ. պտուղ, 8157,9տ բանջարեղեն և 4911տ խաղող:

Մեծ աջակցություն է ցուցաբերվել առանձին տնտեսվարող սուբյեկտներին և արտահանող կազմակերպություններին գյուղատնտեսական մթերքների արտադրության և արտահանման գործում:

Հաշվետու տարում վարչության կողմից աշխատանքային ծրագրին համապատասխան ՀՀ Արմավիրի մարզպետի 17.12.2012թ թիվ 100 կարգադրության հիման վրա կազմակերպվել և համակարգվել է համայնքներում առկա անասնազվիաքանակի համատարած հաշվառման աշխատանքները: 2013թվականի հունվարի 1-ի դրությամբ մարզում հաշվառվել է 54894 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիներ, որից կովեր 19972, մանր եղջերավոր 90025, խոզեր 20683, 1511529թռչուններ:

2013թվականի ընթացքում արտադրվել է 6712 տոննա տավարի, 1901 տոննա ոչխարի, 777 տոննա խոզի, 1330 տոննա թռչնի միս, 600տոննա ձուկ, 48700տոննա կաթ, 178տոննա բուրդ և 83,7 միլիոն հատ ձու, որը բոլոր ցուցանիշների գծով գերազանցել է նախորդ տարվա մակարդակը: ՀՀ Արմավիրի մարզպետի 12.03.2013թ. թիվ 14 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից վերահսկվել և կարգավորվել են տարաբնույթ նշանակության ջրատարների, մայր ջրանցքների և ջրամղիչ կայանների մաքրման և վերականգնման աշխատանքները: Արդյունքում 346,1կմ միջոնտեսային 4865կմ ներտնտեսային ցանցերը, 302 խորքային հորերը և 69 պոմպակայանները պատրաստ են եղել ջրամատակարարմանը, որը սկսվել է ապրիլի 1-ին: 2013թվականը իր բնակլիմայական պայմաններով հանդերձ բնութագրվել է որպես սակավաջուր: Մեծամոր գետում ընդհանրապես չի բարձրացել ջրի

մակարդակը, որը որոշակի ոռոգման խնդիրներ է առաջացրել „Սև-ջուր Ախթամար,,և „Ակնալիճ,, ՋՕԸ-ի կողմից սպասարկվող համայնքներում:

Հարցի կարգավորման նպատակով պետբյուջեի միջոցների հաշվին իրականացվել է 8916 մետր երկարության կիսախողովակների տեղադրում, հորատվել է 9 խորքային հորեր և վերանորոգվել 11 խորքային հորեր, որը բարելավվել է շուրջ 2294 հեկտար հողատարածությունների ոռոգումը,

Ավարտվել են համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ և համայնքների կողմից 15տոկոս համաֆինանսավորմամբ մարզի 12 համայնքներում ներտնտեսային ցանցերի վերանորոգման աշխատանքները: Ծրագրի արդյունքում վերականգնվել է 28,6 կմ երկարությամբ ջրագծեր, որը ոչ միայն կբարելավվի ջրամատակարարումը, այլ էապես կկրճատի նաև գոյություն ունեցող ոռոգման ջրի կորուստները:

Մարզպետի կողմից ջրօգտագործողներին որպես աջակցություն վճարվել է համաշխարհային բանկի միջոցներով համայնքների ներտնտեսային ցանցերի վերանորոգման արդյունքում 6 համայնքների 15 տոկոս համաֆինանսավորման պարտք մնացած գումարը 20,439 մլն դրամ արժեքով:

2013թ դեկտեմբերի 31-ի դրությամբ մարզի 36987 ջրօգտագործողներին մատակարարվել է 232,6միլիոն մետր խորանարդ ոռոգման ջուր 2,55 մլրդ դրամ հասույթով,որի դիմաց գանձվել է 2,006 մլրդ դրամ , կամ գանձման մակարդակը կազմել է 78,4 տոկոս:

Աշխատանքային ծրագրին համապատասխան և մարզպետի կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովը ուսումնասիրել և գույքագրել է մարզի տարածքով հոսող Արաքս, Մեծամոր և Քասախ գետերի , ինչպես նաև հեղեղատարների հունների մաքրման և ավապատնեշների ամրացման նպատակով իրականացվելիք աշխատանքները և ներկայացրել ՀՀ կառավարություն: Հարցի կարգավորման նպատակով ՀՀ կառավարության կողմից հատկացվել է 191,58 մլն դրամ գումար և իրականացվել է.

1. Արաքս գետի ավիի ամրացում՝ Փշատավան համայնքի վարչական տարածքում
2. Մեծամոր գետի ավիի ամրացում՝ Ակնաշեն համայնքում
3. Հեղեղատարի հունի մաքրում և ավիի ամրացում՝ Խանջյան համայնքում
4. Մեծամորի հեղեղատարի հունի մաքրում և ավիի բարձրացում՝ Մայիսյան համայնքում:

Մարզպետի մշտական ուշադրության կենտրոնում է եղել հողերի մելիորատիվ վիճակի բարելավման,մարզում առկա 280կմ երկարությամբ բաց կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման և վերանորոգման աշխատանքները: Ընթացիկ տարում պետբյուջեի միջոցների հաշվին 12 համայնքներում մաքրվել են 62,48 կմ երկարությամբ բաց դրենաժային

ցանց: Այս բնագավառում դեռևս հիմնախնդիր է մնում առկա շուրջ 280կմ երկարությամբ փակ դրենաժային համակարգի մաքրումը և վերանորոգումը:

Հայաստանի Հանրապետությունում 2010-14թթ սերմնաբուծության զարգացման ծրագրի շրջանակներում հաշվետու տարում 2013թ գարնանացանի համար անհրաժեշտ սերմացուների հայտերը մարզպետարանը սահմանված կարգով ներկայացրել է ՀՀ գյուղատնտեսության նախարարություն: Հաշվետու տարում գարնանացանի և աշնանացանի աշխատանքները խթանելու նպատակով գյուղացիական տնտեսություններին որպես աջակցություն տրամադրվել է.

1. 7000կգ գարնանացան գարու՝ 1կգ-ը 200դրամով և 4630կգ առվույտի՝ 1 կգ-ը 1500 դրամով, սերմացու, որը եռակողմ կնքված պայմանագրերով հատկացվել է 20 համայնքների 136 շահառուներին, որոնք 220,2 հեկտարի վրա կատարել են ցանքսի աշխատանքներ:
2. 156 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու՝ 1կգ-ը 160 դրամով բերքահավաքի ժամանակ վճարելու պայմանով, որը եռակողմ կնքված պայմանագրերով հատկացվել է 13 համայնքների 346 շահառուների, որոնք 520 հեկտարի վրա իրականացրել են ցանքսի աշխատանքներ:

Մարզի հողօգտագործողներին որպես աջակցություն ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով 2013թ գարնանը և աշնանը հատկացվել է.

1. 8170 տոննա ազոտական պարարտանյութ, որից վճարվել և ներկրվել է 7761,65 տոննան, որը բաշխվել է թվով 17072 շահառուների:
2. 2742000 լիտր դիզելային վառելանյութ, որից վճարվել և ներկրվել է 1711941 լիտր, որը բաշխվել է թվով 4774 շահառուների:

Եթե 2012թվականին մարզի Գայ, Արևաշատ, Փարաքար և ք. Էջմիածին համանմյքների մորմագգի կուլտուրոնների վրա էր հայտնաբերվել կարտոֆիլի և լուլիկի ցեցի վնասի հետքեր, ապա հաշվետու տարում այն մեծացնելով տարածվածության արեալը՝ ընդգրկվել է Էջմիածնի և Արմավիրի տարածաշրջանների գրեթե բոլոր համայնքները: Ցեցի հասցրած վնասները մեղմելու նպատակով ԳԱՄԿ-ի հետ համատեղ իրականացվել են սեմինարներ և դաշտային օրեր, գյուղացիական տնտեսություններին բաժանվել է թեմային նվիրված շուրջ 2600 տեղեկատվական թերթիկներ և 300 գրքույկներ, պայքարի միջոցառումների վերաբերյալ գյուղացիական տնտեսություններին պարբերաբար խորհրդատվություն է տրվել մարզի տարբեր հեռուստաընկերությունների եթերներով և լուսաբանվել է մարզային „Հայ ֆերմեր,, թերթում:

ՀՀ կառավարության 28.02.2013թ N 265-Ն որոշման պահանջներին համահունչ քանդվել է Գայ  
և Աղավնատուն համայնքներում ֆիլոքսերա վնասատույով վարակված 8,91 հեկտար խաղողի  
այգիները, որտեղ իրականացվել են կարանտին բոլոր միջոցառումները և թվով 20  
այգետերերին՝ երեք տարվա կորցրած բերքի կորուստի դիմաց, տրվել է 27,933 մլն դրամ  
սոցիալական աջակցություն:

*ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի  
գյուղատնտեսության և բնապահպանության  
վարչության պետ՝*

*Ա. Այվազյան*